Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2021 թ.
փետրվարի 16 -ի N 122 - Ա
որոշման

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Տաճարի նորոգումը: Ծրագրի իրականացման ընթացքում պետք է հիմնովին վերանորոգվեն կառույցի հիմքերը, պատերը, տանիքը, գմբեթները, պետք է կատարվեն ներքին հարդարման աշխատանքներ, որմնանակարների վերականգման աշխատանքներ, տաճարի շրջակա տարածքի բարեկարգում, ծիսական պարագաների համալրում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ 04703401: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հոգևոր՝ եկեղեցաշինական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 4.123.794.000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, հավատացյալ ժողովուրդ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 11 հուլիս , 2017 թ. – 30 հունիսի, 2022 թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Տաճարի նորոգում, ամրակայում բակի բարեկարգման աշխատանքները, ծիսական պարագաների համալրում, որի ընդհանուր գումարը 4.123.794.000 դրամ:<br>1. Վերնաշերտային տեխնածին գրունտային ջրերից Մայր Տաճարի պաշտպանության և ամրակայման շին աշխատանքներ - 133.500.000 դրամ, որից 42.885.950. դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ: |

| | | |
|---|---|---|
| | | 2. Արտաքին պատերի նորոգման և ամրակայման շին. աշխատանքներ - 63.400.000 դրամ, որից 24.153.660 դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>3. Կենտրոնական գմբեթի նորոգման և ամրակայման շին. աշխատանքներ - 328.030.000 դրամ, որից 133.843.150 դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>4. Զանգաշտարակի նորոգման և ամրակայման շին. աշխատանքներ - 564.800.000 դրամ, որից 255.486.980 դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>5. Ներքին ամրակայման, նորոգման և հարդարման շին. աշխատանքներ - 638.266.000 դրամ, որից 271.184.570 դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>6. Ներկման աշխատանքներ - 198.232.000 դրամ, որից 81.685.550 դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>7. Ներքին էլեկտրամատակարարում - 55.462.000 դրամ, որից 27.731.000 դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>8. Արտաքին և ներքին լուսավորություն - 207.042.000 դրամ:<br>9. Թույլ հոսանքներ, ակուստիկ համակարգ, տեսանկարահանման համակարգ, ներքին ցանց, հեռարձակման կայանի միացում - 184.482.000 դրամ;<br>10. Հակակողոպուտային և հակահրդեհային համակարգ - 25.834.000 դրամ, որից 2.917. 380 դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>11. Բակի ամբողջական բարեկարգում և լանդշաֆտային աշխատանքներ - 874.720.000 դրամ, որից 259.178.900 դրամ՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>12.Արտաքին մալուխագծի անցկացման աշխատանքներ - 35.540.000 դրամ, որից 7.270.380 դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>13. Օդափոխություն, սառնամատակարարում և ջեռուցում - 269.232.000 դրամ, որից 110. 395.550 դրամը՝ «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքներ:<br>14. Անկյունային սրահների, թաղերի և տանիքների նորոգում և ամրակայում - 322.784.000 դրամ:<br>15. Գոյություն ունեցող թանգարանի մի մասի ձևափոխումը ավանդատան - 103.908.000 դրամ:<br>16. Ներքին կահավորում (նստարաններ, ջահեր, պահարաններ, գրադարակներ և ծիսական պարագաներ (գրակալներ, մոմակալներ, Սուրբ Խորանի վարագույներ, քշոցներ, բուրվառներ) - 118.562.000 դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | Կատարվելիք շին. աշխատանքների գումարը կազմում է 3.523.794.000 դրամ, 100 .000.000 դրամ չնախատեսված ծախսեր են, որից 50.000.000 դրամը «Հորիզոն 95» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագրից բխող չնախատեսված ծախսերն են, իսկ 500.000.000 դրամ գումարի չափով նախատեսվում է նյութերի և սարքավորումների ներմուծում: |
| 10. | Ձեռք բերվող ապրանք-ների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Տաճարի նորոգում, ամրակայում, ներքին հարդարում, բակի բարեկարգում, որի ընդհանուր գումարը 4.123.794.000 դրամ դրամ:<br>Կատարվելիք շին. աշխատանքների գումարը կազմում է 3.523.794.000 դրամ, 100. 000.000 դրամ չնախատեսված ծախսերն են, որից 50.000.000 դրամը «Հորիզոն 95» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագրից բխող չնախատեսված ծախսերն են, իսկ 500.000.000 դրամ գումարի չափով նախատեսվում է նյութերի և սարքավորումների ներմուծում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակեր-պական ծախսերը | Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպություն-ների հետ | չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերա-հսկողության մեխանիզմ-ների նկարագրություն | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ